ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ Կարեն Սարգսյանի՝ 2019 թ. մայիսի 16-23-ը Իտալիայի Տուշայի համալսարան կատարած այցի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի մայիսի 16-23-ը Եվրամիության Էրազմուս+ KA 107 ծրագրի շրջանակներում Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը պաշտոնական այցով գործուղվել էր Իտալիայի Տուշայի համալսարան: Պատվիրակության կազմում էին՝ կրթության որակի ապահովման բաժնի պետ Նարինե Վարդանյանը, գիտական քարտուղար Ատոմ Մխիթարյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արմեն Սարգսյանը, արտաքին կապերի բաժնի պետ Արուսյակ Հարությունյանը:

Այցի շրջանակներում Գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակությունը ունեցավ մի շարք հանդիպումներ համալսարանի վարչական անձնակազմի ներկայացուցիչների հետ: Ինքս հանդիպում եմ ունեցել Տուշայի համալսարանի արտաքին կապերի բաժնի ներկայացուցիչ Կարլո Կոնտարդոյի, տնտեսագիտության ամբիոնի ներկայացուցիչներ Ջակոմո Բրանկայի,Ստեֆանո Վալլեյի, Բարբարա Աքուիլանի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին համատեղ դիպլոմի շնորհմամբ Ֆինանսների կառավարում և Մարքեթինգ մագիստրոսական ծրագրերի իրականացման հետ կապված խնդիրները, հստակեցվել են անելիքները: Արդյունքում հստակեցվեցին համապատասխան կրթական ծրագրերը, դասավանդվող առարկաների ցանկը, ինչպես նաև ԳԿՄԿ և Տուշայի համալսարանի միջև կնքվելիք համաձայնագրի դրույթները:

Պատվիրակության անդամների համար կազմակերպվեց նաև շրջայց Տուշայի համալսարանի տարածքում,գրադարանում, ֆակուլտետներում և լաբորատորիաներում:

Կարեն Սարգսյան

Տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ

Տ.գ.թ., դոցենտ

30.05.2019 թ.